ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

N 10 – Ա **22 հունվարի 2018 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԻ, ՍԵԼԱՎՆԵՐԻ, ՍՈՂԱՆՔՆԵՐԻ, ՎԹԱՐԱՅԻՆ ԿԱՄՈՒՐՋՆԵՐԻ ՓԼՈՒԶՄԱՆ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐ ՔԱՐԱԹԱՓՈՒՄՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ, ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՈՒ ՎԵՐԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ և 1.22-րդ կետերի դրույթներով

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի տարածքում հնարավոր ջրհեղեղների, հեղեղումների, սելավների, սողանքների, հնարավոր քարաթափումների տեղամասերն ու վթարային կամուրջները հաշվառելու, անհրաժեշտ միջոցառումներ ձեռնարկելու, արտակարգ իրավիճակներում վնասների նվազեցման և հետևանքների վերացման աշխատանքներն օպերատիվ կազմակերպելու նպատակով ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝

Հակոբյան Կարեն - ՀՀ Գեղարքունիքի մարզպետի տեղակալ, նախագահ

Գալստյան Գևորգ - ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության պետ, փ/ծ գնդապետ

Համբարձումյան Համբարձում - մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ

Հարությունյան Վանիկ - մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ

Զոհրաբյան Արմեն - մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ

2. Մարզի համայնքների ղեկավարներին՝

1) մեկամսյա ժամկետում սույն որոշմամբ ստեղծված հանձնաժողովին ներկայացնել տեղեկատվություն համայնքի հեղեղավտանգ, սելավավտանգ, սողանքավտանգ տարածքների, հնարավոր քարաթափումների ու վթարային կամուրջների վերաբերյալ տեղեկատվություն և առաջարկություններ՝ հնարավոր արտակարգ իրավիճակների կանխարգելման ու հետևանքների վերացման ուղղությամբ կատարվելիք աշխատանքների մասին, անհրաժեշտության դեպքում գործողությունների ուղղություններն ամրագրել համապատասխան իրավական ակտերով.

2) հաշվառել համայնքում առկա սարքին ինժեներական տեխնիկաները /մղաններ, էքսկավատորներ, ինքնաթափեր և այլն/ և ձեռք բերել պայմանավորվածություններ անհրաժեշտության դեպքում դրանց օգտագործման վերաբերյալ:

3. Հանձնաժողովին՝ հնգօրյա ժամկետում վերլուծել համայնքներից ստացված տեղեկատվությունը, կազմել մարզում 2018 թվականի ընթացքում կանխատեսվող գարնանային հեղեղումների պլան- ժամանակացույց՝ վթարային կամուրջների փլուզման, հնարավոր քարաթափումների, սողանքավտանգ տարածքներում սպասվող հնարավոր վտանգների նվազեցման, հետևանքների վերացման միջոցառումների մասին և ներկայացնել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի հաստատմանը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ ԿԱՐԵՆ ԲՈԹՈՅԱՆ